ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«11» հոկտեմբերի 2024 թվականի N: 486 - Ա ք. Գյումրի

ԱՔՍԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ «ԱՄԱՍԻԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 2-րդ մասի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N 129-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգի» 85-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ամասիայի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի մրցութային հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 11-ի N 3 որոշումը և Աքսաննա Պողոսյանի 2024 թվականի հոկտեմբերի 11-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Աքսաննա Պողոսյանին 2024 թվականի հոկտեմբերի 14-ից նշանակել «Ամասիայի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնում՝

կնքելով աշխատանքային պայմանագիր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետով:

2. 2024 թվականի հոկտեմբերի 14-ից դադարեցնել Աքսաննա Պողոսյանի՝ «Ամասիայի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի լիազորությունները՝ լուծելով նրա հետ 2024 թվականի օգոստոսի 23-ին կնքված N 7 ժպ աշխատանքային պայմանագիրը:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է